

# ՀՀ ներդրումային քաղաքականության վերլուծություն

ՀՏԴ 338.2

**Թորոսյան Ալիկ Ա.**

ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի մագիստրանտ (Երևան, ՀՀ)  
aliktorosyan1999@gmail.com

**Հանգուցաբառեր՝** ներդրումներ, օրենսդրություն, ներդրումային քաղաքականություն, հայեցակարգ, աշխարհագրական կառուցվածք, արդյունավետություն

## Анализ инвестиционной политики РА

**Торосян Алик А.**

АГЭУ РЭ и МЭО факультет, магистрант (Ереван, РА)  
aliktorosyan1999@gmail.com

**Аннотация:** В статье исследуется действующая правовая база для привлечения инвестиций в Армении и концепция инвестиционной политики. Затем были изучены показатели, оценивающие эффективность инвестиционной политики, проводимой государством, и их изменение за последние годы. Также была изучена динамика инвестиций, поступающих в Армению, их отраслевая и географическая структура за последнее десятилетие. Затем были сделаны выводы об эффективности проводимой инвестиционной политики.

**Ключевые слова:** Инвестиции, законодательство, инвестиционная политика, концепция, географическая структура, эффективность

## Analysis of RA investment policy

**Torosyan Alik A.**

ASUE RE and IER Faculty Master Student (Yerevan, RA)  
aliktorosyan1999@gmail.com

**Abstract.** The article examines the current legal framework for investment promotion in Armenia and the concept of investment policy. Then the indicators evaluating the effectiveness of the investment policy implemented by the government and their change in recent years were studied. The dynamics of investments coming to Armenia, their sectoral and geographical structure during the last decade were also studied. Then the conclusions on the effectiveness of the implemented investment policy were made.

**Keywords:** Investment, legislation, investment policy, concept, geographical structure, efficiency

Ներդրումային քաղաքականությունը խիստ լայն հասկացություն է: Տնտեսագիտական տարբեր ոլորտներում և պրակտիկայում դրա բովանդակությունը ունի իր առանձնահատկությունները: Մակրոմակարդակում ներդրումներն ամբողջական ծախսերի մի մասն են՝ ներառում են արտադրության նոր միջոցների վրա ծախսերը, ներդրումները բնակարանային շինարարությունում և ներդրումները ապրանքային պաշարներում: Այսինքն ներդրումները երկրի համախառն ներքին արդյունքի մի մասն են, որոնք ընթացիկ ժամանակահատվածում չեն սպառվում և տնտեսության մեջ ապահովում են կապիտալի աճ:

Ներդրումների և կապիտալի միջև գոյություն ունի անխզելի կապ: Ներդրումները հանդես են գալիս որպես փոփոխական հոսք, իսկ կապիտալը՝ պաշար: Կապիտալը իրենից ներկայացնում է փողի միջոցների և իրական կապիտալային ապրանքների ձևով խնայողությունների կուտակումներ, որոնք դրանց սեփականատերերի կողմից ներգրավվում են տնտեսության գործընթացներում որպես

ներդրումային ռեսուրս՝ եկամուտ ստանալու նպատակով:

Ըստ կապիտալի ներդրման օբյեկտների՝ ներդրումները դասվում են իրականի և ֆինանսականի: Իրական ներդրումներ են նյութական օբյեկտների վրա կատարված ծախսերը, որոնք օգտագործվում են որոշակի ժամանակահատվածում և շահույթ են սպասվում: Ֆինանսական են համարվում կապիտալի ներդրումը տարբեր ֆինանսական ակտիվներում՝ գլխավորապես արժեթղթերում՝ եկամուտ ստանալու նպատակով [1]:

Ներդրումային քաղաքականությունը ներդրումային գործունեության պետական կարգավորման գործընթաց է, ներդրումների հոսքերի ակտիվացման և խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջություն: Ներդրումային քաղաքականություն վարվում է պետության և տնտեսվարող մյուս սուբյեկտների նկատմամբ: Ամեն մի տնտեսվարող սուբյեկտ մշակում և իրականացնում է իր ներդրումային քաղաքականությունը: Պետության ներդրումային գործունեության կարգավորումը ուղղված է

ընդհանուր տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական ենթակառուցվածքների զարգացմանը: Այն իրականացվում է պետական ներդրումների և մասնավոր ներդրումային գործունեությունը խթանելու միջոցով:

Տարբերվում են ներդրումային գործունեության վրա պետական ներգործության պասիվ և ակտիվ մեթոդներ: Պասիվ մեթոդների օգտագործումը կապված է վերարտադրության պայմանների և սպառման մասին տեղեկատվության ապահովման հետ: Դրանք ներառում են նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների հիմնավորումը:

Ներդրումային գործունեության մեջ պետության ակտիվ մասնակցության մեթոդներն են.

- Անհատ ձեռներեցների համար բարենպաստ պայմանների ստեղծում
- Պետության ուղղակի մասնակցություն երկրի համար կարևոր և արդյունավետ նախագծերում
- Պետության մասնակցություն ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծմանը և վերակառուցմանը

Ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացում, տնտեսական քաղաքականության ճշգրտում, պետական և շուկայական կարգավորման օպտիմալ գույակցում է պահանջվում հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Ներդրումային ոլորտում պետության դերի ուժեղացման հնարավորությունները մի կողմից կապված են ֆինանսական հնարավորություններով, մյուս կողմից՝ տնտեսության մեջ պետության դերի ուժեղացմամբ:

Ներդրումային քաղաքականություն իրականացնելիս կարևոր նշանակություն է ձեռք բերում մասնավոր ներդրողների ներդրումային գործունեության համար բարենպաստ ռեժիմի ստեղծումը: Պետական ներդրումների հետ միասին մասնավոր ներդրողների համար բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման ընթացքում պետության դերի ուժեղացումը պետք է հենվի հարկային, դրամավարկային, ամորտիզացիոն և այլ ձևերով կապիտալի ներհոսք ապահովող մեթոդների կատարելագործման վրա:

Ներդրումային քաղաքականության ոլորտում պետական մարմինների գործառույթները և ոլորտը կարգավորող օրենսդրական հիմքերը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային առավել բարենպաստ ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և

միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն է [2]:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը ու ուղղված է օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը, օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների ներգրավման, առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի ներդրման ու արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետության ներդրումային ոլորտը կարգավորվում է նաև «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջպետական երկկողմ համաձայնագրերով [3]: Համաձայնագրերը ստորագրվել է 43 երկրների հետ և այն կրում է շարունակական բնույթ: Համաձայնագրերը նախատեսում են երկու կողմերի ներդրողների և վերջիններիս ներդրումների համար լրացուցիչ երաշխիքների և հավելյալ պաշտպանություն միջազգային իրավունքին համապատասխան: Համաձայնագրերով սահմանված են երկու կողմերի միջև ներդրումային գործունեության ընդհանուր սկզբունքները՝ հնարավորություն ընձեռելով հավասարության և փոխշահավետության հիման վրա ստեղծել կայուն, արդարացի, բարենպաստ և թափանցիկ պայմաններ երկու երկրների ներդրողների համար:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը իրականացնում է ըստ Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի մասին կառավարության 2005 թվականի որոշմամբ: Հայեցակարգը արտահայտում է ներդրումային քաղաքականության ընդհանուր մոտեցումներն ու ռազմավարությունը և իրենից ներկայացնում է խնդիրների, սկզբունքների և նպատակների համակցություն:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգը սահմանում է ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը: Այն է տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

Ներդրումային քաղաքականության հիմնական նպատակը պետք է իրագործվի.

- Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման

- Ներդրումային ոլորտը կարգավորող իրավա-պայմանագրային դաշտի կայացման

- Վարչարարական խոչընդոտների վերացման

- Ներդրումների ներգրավման

- Ներդրումային ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմինների օպտիմալ կառուցվածքի ձևավորման

- Ներդրումները խթանող ենթակառուցվածքների կայացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգը սահմանում է նաև ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքները: Դրանք են.

- ներդրումները կարգավորող օրենսդրության կայունության ապահովումը,

- օտարերկրյա և տեղական ներդրողների համար տնտեսավարման հավասար, ոչ խտրական պայմանների ապահովումը,

- օտարերկրյա ներդրումներին և ներդրողներին ազգային և առավել բարենպաստության ռեժիմների տրամադրումը,

- ներդրումային ոլորտում տնտեսավարման ազատական սկզբունքների կիրառումը,

- ներդրումների և ներդրողների շահերի պաշտպանության ապահովումը,

- ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումը և կիրառումը:

ՀՀ ներդրումային քաղաքականության հետագա բարեփոխումները և զարգացումը սահմանվում է Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում [4]: Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում սահմանվում է, որ գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավումը նախատեսվող ժամանակահատվածում կշարունակի լինել զբաղվածության աճին ուղղված պետական շրջանակային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը և ուղղված կլինի գործարարությամբ զբաղվելը և ներդրումներ իրականացնելը դյուրինացնելուն ու անհարկի պետական միջամտությունները էականորեն կրճատելուն, ներդրողների շահերի պաշտպանության մակարդակի հետևողական բարձրացում: Աս նպատակների իրականացման համար ՀՉԾ<sup>1</sup>-ում ներկայացվում է հիմնական բարեփոխումները, որը պետք է իրականացվեն: Դրանք են.

- Բարելավել մրցակցության իրավական դաշտը և բարձրացնել մրցակցային օրենսդրության կիրարկման արդյունավետությունը

- ՏՄՊՊՀ-ն պետք է անցում կատարի գների տատանումների վրա կատարելուց դեպի մուտքի փաստացի և հնարավոր խոչընդոտների և շուկայի մրցակցային իրավիճակի վրա կենտրոնանալուն

- Ընդլայնել ՀՀ ՏՄՊՊՀ լիազորությունները պետական մարմինների կողմից հնարավոր խոչընդոտ առաջացնող միջամտությունները և կարգավորումները կասեցնելու գործում, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը:

- Ուժեղացնել պետական աջակցության օրենսդրությունը և դրա կիրարկումը՝ նվազագույնին հասցնելով պետական աջակցության աղճատող ազդեցությունները մրցակցության վրա

- Ապահովել տվյալների նկատմամբ հասանելիություն և դրանց թափանցիկություն՝ շուկայի մասնակիցների միջև մրցակցային չեզոքություն երաշխավորելու և շուկայական աղճատումներից խուսափելու նպատակով:

- Վերացնել դեպի շուկա մուտքի և մրցակցության համար եղած խողընդոտները, ինչպես նաև ներառել մրցակցության սկզբունքները կառավարության առավել լայն քաղաքականություններում:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային քաղաքականությունը իրականացնող մարմինը էկոնոմիկայի նախարարությունն է: Էկոնոմիկայի նախարարությունը ներկայիս կառուցվածքով կազմավորվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միավորման արդյունքում՝ 2019 թվականի մայիսի 8-ին ԱԺ-ի կողմից ընդունված «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն [5]:

ՀՀ-ում ներդրումային քաղաքականության արդյունավետությունը և ներդրումային միջավայրը գնահատող ցուցանիշների վերլուծություն

Ներդրումային քաղաքականության, գործարարության և ներդրումային միջավայրերի գնահատման լավագույն ցուցանիշներից է Համաշխարհային բանկի «Doing Business» տարեկան զեկույցների հենանիշային ցուցանիշները՝ ինչպես այդ զեկույցներում ներառված առանձին ոլորտները, այդպես էլ գործարարության միջավայրի ընդհանուր որակը գնահատելու համար: «Doing Business» զեկույցը կազմված է 10 առանձին ցուցանիշներից: Դրանք

<sup>1</sup> ՀՉԾ – Հեռանկարային զարգացման ծրագիր

են՝ բիզնես սկսելու հնարավորություն, շինարարության հնարավորություն, հոսանք ստանալու հնարավորություն, բիզնեսի գրանցում, վարկ ստանալու հնարավորություն, ներդրողների պաշտպանություն, հարկեր, արտահանման հնարավորություն, պայմանագրերի կատարում և սնանկության ճանաչում: Չեկույցում ներկայացվում է երկրները տվյալ ցուցանիշներով ինչպիսի բարելավումներ են ունեցել տարիների ընթացքում և թե ինչ դիրք են գրավում այդ ցուցանիշների գնահատականներով ուսումնասիրվող երկրների շարքում: «Doing Business» 2016 թվականի զեկույցում նշվում է, որ Հայաստանը իր դիրքերը բարելավել է շինարարության թույլտվության, արտահանման հնարավորության և պայմանագրերի կատարման ցուցանիշներով: Ծինարարության թույլտվություն ստանալը հեշտացել է ի շնորհիվ ցածր ժխակային նախագծերը ճարտարապետական թույլտվություն և տեխնիկական վերահսկողություն ազատելու: Արտահանման հնարավորությունները լավացել են Եվրասիական տնտեսական միության մեջ մտնելու արդյունքում միության երկրների շրջանում թղթաբանության նվազման շնորհիվ, իսկ

պայմանագրերի կատարումը բարելավել է նոր օրենքի շնորհիվ, որով դրական գործերը դատավորներին պատահականորեն ամբողջովին ավտոմատացված համակարգով: 2017 թվականի զեկույցով նշվում է, որ Հայաստանը բարելավել է վարկեր ստանալու ցուցանիշը գրավադրման ժամանակակից գրանցամատյան և անհատական տվյալի պաշտպանության բարելավման շնորհիվ: 2018 թվականին Հայաստանում հեշտացել է էլեկտրականություն ստանալը՝ էլեկտրաէներգիայի միացման ընթացակարգերի նոր ժամկետներ սահմանելու շնորհիվ, և բիզնեսի գրանցումը՝ հողերի կառավարման համակարգում առաջացած վեճերի լուծման մեխանիզմի բարելավման շնորհիվ: 2019 թվականի զեկույցով նշվում է, որ Հայաստանը բարելավել է իր դիրքերը միանգամից հինգ ցուցանիշներով: Դրանք են Բիզնես սկսելու հնարավորությունը, էլեկտրականություն ստանալը, ներդրողները պաշտպանությունը, հարկերը և պայմանագրերի կատարումը: Ստորև ներկայացված է 2010-2019 թվականների վերոնշյալ ցուցանիշներով Հայաստանի դիրքը զեկույցում ներառված երկրների շրջանում:


**Աղյուսակ 1. «Doing Business» զեկույցի ցուցանիշներով Հայաստանի դիրքը 2010-2019 թվականներին [8]**

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Starting a business	21	22	10	11	6	4	5	9	15	8
Dealing with construction permits	72	78	57	46	79	81	62	81	89	98
Getting electricity			150	101	109	131	99	76	66	17
Registering property	5	5	5	4	5	7	14	13	13	14
Getting credit	43	46	40	40	42	36	42	20	42	44
Protecting minority investors	93	93	97	25	22	49	49	53	62	51
Paying taxes	153	159	153	108	103	41	41	88	87	82
Trading across borders	102	82	104	107	117	110	29	48	52	46
Enforcing contracts	62	63	91	91	112	119	28	28	47	24
Resolving insolvency	49	54	62	63	76	69	71	78	97	95
Ranking	43	48	55	32	37	45	35	38	47	41

Աղյուսակի տվյալներից երևում է, որ Հայաստանը լավ դիրքեր է գրանցում բիզնես սկսելու և բիզնեսի գրանցման ցուցանիշներով: Բիզնես սկսելու ցուցանիշով Հայաստանը երկար ժամանակ եղել է ուսումնասիրվող երկրների առաջին տասնյակում: Իսկ բիզնեսի գրանցման ցուցանիշով Հայաստանը լավ դիրքեր է գրավել մինչև 2015 թ., դրանից հետո այդ ցուցանիշով վատացել է երկրի դիրքերը: Հայաստանը վերջին տարիներին բարելավել է իր դիրքերը արտահանման հնարավորություն, պայմանագրերի կատարման, էլեկտրականություն ստանալու հնարավորության ցուցանիշներով: Իսկ մյուս

ցուցանիշներով երկիրը կամ էական փոփոխություններ չի ունեցել, կամ ավելի է վատացրել իր դիրքերը:

Ներդրումային միջավայրը գնահատելու համար կարևոր ցուցանիշ է նաև Համաշխարհային բանկի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից իրականացվող BEEPS զեկույցը: Չեկույցի համար հիմք են հանդիսանում հարցումները, որոնք իրականացվում են հետազոտվող երկրներում գործարարների շրջանում՝ պարզելով այն հիմնախնդիրները, որոնք խանգարում են ձեռնարկատիրությանը զբաղվելու համար:




**Գծապատկեր 1.** BEEPS-2008 և BEEPS-2013 զեկույցների արդյունքները (Ձեռնարկատերերի տեսակարար կշիռը, որոնց կարծիքով տվյալ հիմնախնդիրը խնդիր չէ նրանց համար) [9]

Գծապատկերում ներկայացված է 2008 և 2013 թվականների BEEPS զեկույցների արդյունքների վերլուծությունը Հայաստանի համար: Գծապատկերից պարզ է դառնում, որ 2008-2013 թվականների ընթացքում ըստ ձեռնարկատերերի միայն հարկային բեռը, ֆինանսական միջոցների հասանելիությունը, հող ձեռք բերելու հնարավորություններն են խնդիրներ ձեռնարկատիրական գործունեության համար: Մնացած բոլոր հիմնախնդիրները բարելավվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում:

Օտարերկրյա ներդրումների կարգավորումների սահմանափակումները գնահատելու համար կարևոր ցուցանիշ է Տնտեսության համա-

գործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՁԿ) կողմից հաշվարկվող օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսը: Այն ներառում է 22 ոլորտային ցուցանիշների համադրություն: Այդ ոլորտներն են՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն, էլեկտրականություն, մշակող արդյունաբերություն, տրանսպորտ, շինարարություն, մատակարարում, կապ, անշարժ գույք, ֆինանսական և մասնագիտական ծառայություններ: Հայաստանը այս ցուցանիշում ընդգրկվել է 2018 թվականին՝ ներառվելով ամենաքիչ սահմանափակումներ ունեցող երկրների առաջին տասնյակում [10]:




**Գծապատկեր 2.** Ներդրումների և ամբողջիզացիոն հատկացումների փոփոխությունը 2000-2019 թվականների ընթացքում (նյն դրամ) [11]

**ՀՀ-ում կատարված մասնավոր ներդրումների փոփոխությունները**

Ներդրումային քաղաքականության գնահատման ամենալավ ցուցանիշը երկրում կատարված ներդրումների վերլուծությունն է: Դա հնարավորություն կտա պարզելու, արդյոք իրականացվող ներդրումային քաղաքականության արդյունքում դրական տեղաշարժ կա ներգրավված ներդրումների քանակության մեջ և թե ինչպես պետք է հետագայում իրականացվի ներդրումային քաղաքականությունը: Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ-ում կատարված հիմնական միջոցների համախառն կուտակումը և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունները 2000-2019 թվականների ընթացքում: Գծապատկերից

երևում է, որ մինչև 2008-2009 թվականների տնտեսական ճգնաժամը ներդրումները և ամորտիզացիոն հատկացումները աճել են, ապա նվազման միտում է ունեցել մինչև 2016 թվականը հետո աճել մինչև 2019 թվականը:

Ներդրումային քաղաքականությունը գնահատելու համար կարևոր է նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծությունը: Գծապատկեր 3-ում ներկայացված է ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումների փոփոխությունները: Այլ ներդրումների մեջ մտնում են դրամական միջոցները և ավանդները, վարկերը, սպահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրերը և առևտրային վարկերը:




**Գծապատկեր 3.** ՀՀ-ում կատարված ներդրումների փոփոխություն 2000-2019 թթ. (մլն դրամ) [12]

Գծապատկերից երևում է, որ բոլոր երեք ներդրումների տեսակները 2000-2019 թվականների ընթացքում աճի միտում են ունեցել: Ուղղակի ներդրումները աճել են մոտ 16 անգամ, պորտֆելային ներդրումները՝ 10 անգամ, իսկ այլ ներդրումները՝ 13 անգամ: Դրանց մեջ ամենափոքր տեսակարար կշիռը ունի պորտֆելային ներդրումները: Չնայած նրան, որ պորտֆելային ներդրումները էականորեն աճել են, դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ 2000-2019 միջինում տատանվում է 7 տոկոսի սահմաններում: Սա ապացուցում է, որ ֆինանսական շուկան երկրում վատ է զարգացած և վերջին 20 տարվա ընթացքում դրական փոփոխություն չի արձանագրվել: Իսկ ներդրումների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը ունի այլ ներդրումներ բաժինը: Ներդրումների այս բաժնի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ավանդները և վարկերը: Վարկերը և ավանդները միասին 2019 թվականին կազմել են այլ ներդրումների 85 տոկոսը, իսկ ընդհանուր

ներդրումների 68 տոկոսը: Այն իր մեջ լուրջ ռիսկայնություն է պարունակում, քանի որ ցանկացած փոփոխություն բանկային համակարգում լուրջ ազդեցություն կունենա ներդրումների մակարդակի վրա:

Ներդրումային քաղաքականության վերլուծության համար էական նշանակություն ունի երկրում կատարվող ներդրումների ճյուղային կառուցվածքը: Քանի որ ներդրումների միջոցով է ստեղծվում ապրանքներ և ծառայություններ ստեղծող և մատուցող ընկերությունները: Ներդրումների ճյուղային կառուցվածքի վերլուծությունը հնարավորություն կտա պարզելու երկրում կատարվող արտադրական գործունեության դիվերսիֆիկացման ապագա պատկերը: Այն նաև հնարավորություն կտա պարզել, արդյոք երկրի տնտեսությունը կախվածություն ունի որևէ ճյուղից և արդյոք կա հնարավորություն ապագայում զարգացնել գիտատեխնիկական ոլորտը:




**Գծապատկեր 4. Ներդրումների ճյուղային կառուցվածքի փոփոխությունը 2010-2018 թթ [13].**

Գծապատկերից երևում է, որ ներդրումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն հանքագործությանը, ֆինանսական միջնորդության, հեռահաղորդակցության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտները: Հանքագործության ոլորտի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների վերջին 10 տարիների ընթացքում ընդհանուր ներդրումների տաս տոկոսի սահմաններում, իսկ 2018 թվականին կազմել է ընդհանուր ներդրումների 19 տոկոսը: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցում է երկրի տնտեսության կախվածությունը հանքագործության ոլորտից: Ֆինանսական միջնորդության տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ միջինում տատանվել է 15-20 տոկոսների սահմաններում, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2017 թվականին՝ կազմելով ընդհանուր ներդրումների 23 տոկոսը: Հեռահաղորդակցության ոլորտի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ վերջին տարիներին նվազել է: Եթե 2010 թվականին այն կազմել է ընդհանուր ներդրումների 23 տոկոսը, ապա 2018 թվականին տեսակարար կշիռը եղել է 8 տոկոս: Սա պայմանավորված է հեռահաղորդակցության ոլորտում նոր օպերատորի՝ «Orange» ընկերության հայկական շուկա մտնելու և ներդրումներ կատարելու հոս: Ընդհանուր ներդրումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունի նաև էլեկտրա-

կանության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտը: Այս ոլորտում կատարվող ներդրումները համեմատաբար կայուն են, քանի որ այս ոլորտում են գործունեություն ծավալում բնական մոնոպոլիա հանդիսացող ըներությունները, ինչպիսիք են՝ «Հայ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն և այս ընկերությունները իրենց պայմանագրերով պարտավորվում են կապիտալ ներդրումներ կատարել: Գծապատկերից երևում է նաև, որ ընդհանուր ներդրումների մեջ փոքր տեսակարար կշիռ ունի գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում ներդրումները և ժամանակի ընթացքում նվազում են՝ 2018 թվականին հասնելով 0.7 տոկոսի: Այս ոլորտում հաջողություններ արձանագրելու համար անհրաժեշտ են քայլեր, ներդրումներ ծավալը մեծացնելու ուղղությամբ:

Ներդրումային քաղաքականության վերլուծության համար էական նշանակություն ունի նաև երկրում կատարվող ներդրումների տարածքային կառուցվածքի վերլուծությունը: Այն հնարավորություն կտա պարզել թե, որ երկրներից են գալիս օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), ինչպիսի կապեր կան այդ երկրների հետ և արդյոք այդ երկրներից եկող ներդրումները ուղղակի օֆշորային գործարքների արդյունք են, թե ոչ:



**Գծապատկեր 5.** Ներդրումների աշխարհագրական կառուցվածքի վերլուծությունը 2010-2018 թթ. [13]

Գծապատկերից երևում է, որ Հայաստանում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումները ամենաշատը գալիս են Ռուսաստանից: Չնայած նրան, որ դրա տեսակարար կշիռը նվազել է 2010-2018 թվականների ընթացքում՝ 51 տոկոսից դառնալով 38, Ռուսաստանը դեռևս մնում է Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի հիմնական դոնորը: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-եր մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Ֆրանսիայից, Գերմանիայից և ԱՄՆ-ից կատարվող ներդրումները: Ֆրանսիայից եկող ՕՈՒՆ-երը վերջին տարիներին նվազել են՝ 2010 թվականին 11 տոկոսից դառնալով 2018 թվականին 3 տոկոս: Գերմանիայից և ԱՄՆ-ից եկող ՕՈՒՆ-երի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ վերջին տասնամյակի ընթացքում գրեթե փոփոխության չի ենթարկվել՝ տատանվելով 3-5 տոկոսների շրջանում: Վերջին տարիներին մեծացել է Միացիկա Թագավորությունից և Նիդերլանդներից եկող ՕՈՒՆ-երի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ: ՄԹ-ից եկող ՕՈՒՆ-երի տեսակարար կշիռը 2010 թվականին եղել է 0.9 տոկոս, իսկ 2018 թվականին՝ 7.8 տոկոս: Նիդերլանդներից եկող ՕՈՒՆ-երը 2010 թվականին եղել է 1.8 տոկոս,

իսկ 2018 թվականին՝ 6.1 տոկոս: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն օֆշորային երկրներից եկող ներդրումներ: Այդպիսի երկրներից են Կիպրոսը, Ջերսին, Վիրջինյան կղզիները, Պանաման և Սեյշելները: 2018 թվականին այս երկրներից միասին եկող ներդրումները կազմել են ընդհանուր ՕՈՒՆ-երի 15 տոկոսը: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն այնպիսի երկրներից եկող ներդրումները, որտեղ մեծ է հայկական սփյուռքը: Այդպիսի երկրներից են Արգենտինան (4-5 տոկոս) և Լիբանանը (2-5 տոկոս): Գրաֆիկից կարել է տեսնել, որ Չինաստանից եկող ներդրումները շատ փոքր տեսակարար կշիռ ունեն ընդհանուր ՕՈՒՆ-երի մեջ:

**ՀՀ-ում կատարված պետական ներդրումների փոփոխությունները**

Պետության կողմից վարած ներդրումային քաղաքականությունը վերլուծելիս շատ կարևոր է ուսումնասիրել պետական ներդրումների դինամիկան և ուղվածությունը: ՀՀ-ն անկախացումից հետո ընտրել է դառնալ ազատ շուկայական տնտեսություն, որը նշանակում է, որ գոյություն չունի պետական սեփականություն, իսկ մինչև անկախացում եղած պետական



սեփականության բոլոր ձևերը մասնավորեցվել է: Սա նշանակում է, որ պետության հիմնական գործառնությունը ներդրումային քաղաքականության ոլորտում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ստեղծումն է:

Այդ առումով էական է վերլուծել պետական բյուջեից առանձին ոլորտներին հատկացված միջոցների դինամիկան: Աղյուսակ 2-ում ներկայացված է 2008-2020 թվականներին պետական բյուջեից տնտեսության առանձին հատվածներին հատկացված միջոցների դինամիկան:

**Աղյուսակ 2. Պետական բյուջեից տնտեսության առանձին հատվածներին հատկացված միջոցները 2008-2020 թթ.**

[14]

	Պաշտպանություն	Տնտեսական հարաբերություններ	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	Առողջապահություն	Հանգիստ, մշակույթ և կրոն	Կրթություն	Սոցիալական պաշտպանություն
2008	121159.6	89445.6	14039.4	49972.5	16021.9	103530.8	212559.1
2009	130211.5	133835.1	21105.9	56168.8	16297.7	107529	243634.1
2010	147555.9	112451.7	42817.9	56130.8	16102.6	97790.1	244168.5
2011	145491	83955.7	43848.5	63312.4	17581.4	106085	256176.3
2012	152766.8	71086.7	14303.5	64498.9	22821.8	102783.5	291731.6
2013	182019	128316.1	21727.7	64355.3	18644.3	103094.7	297379.6
2014	190440.9	83253.8	31296.2	76645.4	21395.7	115806	342469.5
2015	198527.7	109825.7	39214.5	86079.4	30389.7	122280	383703.4
2016	225877.2	131062.3	25642.6	88645.9	26607.2	122411.7	396803.1
2017	294436.9	129520.5	12610.5	83215.4	26004.2	124373.5	408962.9
2018	238483.4	112199.6	11709.1	79574.2	25306.1	121626.5	416625.8
2019	315606.3	111916.3	16247.6	99283.1	33558.3	129336.3	453921.3
2020	387752.9	125425.9	8903.6	148236.8	33625	143796.3	5465757

Աղյուսակի տվյալների պարզ է դառնում, որ գրեթե բոլոր ոլորտներում պետական բյուջեից հատկացված միջոցների ծավալը ուսումնասիրվող ժամանակահատվածում մեծացել է՝ բացառությամբ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտի: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ավելացել է նաև պետական բյուջեի եկամուտները: Հասկանալու համար թե կառավարությունը, որ ոլորտին է ավելի մեծ ուշադրություն դարձնում, պետք ուսումնասիրել առանձին ոլորտներին հատկացված միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ: Ի սկզբանե պարզ է, որ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը պետք է նվազած լինի, քանի որ բացարձակ ցուցանիշը նույնպես նվազել է: Եթե 2008 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ոլորտին հատկացվել է պետական բյուջեի 1.7 տոկոսը, ապա 2020 թվականին այդ ցուցանիշը նվազել է մինչև 0.5 տոկոս: Նվազել է նաև տնտեսական հարաբերությունների<sup>1</sup> և կրթու-

թյան ոլորտներին տրամադրված միջոցների տեսակարար կշիռները: Տնտեսական հարաբերությունների ոլորտը 2008 թվականին եղել է 11 տոկոս, իսկ 2020 նվազել՝ 6.6 տոկոս: Կրթության ոլորտը՝ 2020 թվականին 12.8 տոկոս, 2020 թվականին 7.6 տոկոս: Դրանց փոխարեն աճել են պաշտպանության և սոցիալական պաշտպանության վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռները: Պաշտպանության ոլորտի վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը 2008 թվականին եղել է 14.9 տոկոս, իսկ 2020 թվականին՝ 20.5 տոկոս: Սոցիալական պաշտպանության ոլորտի տեսակարար կշիռը 2008 թվականին եղել է 26.2 տոկոս, իսկ 2020 թվականին՝ 28.9 տոկոս: Գրեթե անփոփոխ են մանցել առողջապահության և հանգստի, մշակույթի ու կրոնի ոլորտների տեսակարար կշիռները: Առողջապահության ոլորտի տեսակարար կշիռը ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ եղել է 6-7 տոկոսների սահմաններում, իսկ հանգստի, մշակույթի և կրոնի տեսակարար կշիռը՝ 1.5-2 տոկոսի սահմաններում:

Պետության ներդրումային քաղաքականությունը ուսումնասիրելու համար կարևոր է նաև ուսումնասիրել պետական բյուջեից հատկացումների տարբեր ծրագրերին: Այդպիսի ծրագրերից են կապիտալ, վարկային, դրամա-

<sup>1</sup> Տնտեսական հարաբերությունների ոլորտը իր մեջ ներառում է գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, էներգետիկայի, հանքարդյունաբերության, տրանսպորտի և կապի, զբոսաշրջության ոլորտներին պետական բյուջեից տրամադրվող միջոցները:

շնորհային, ճանապարհների պահպանության, սուբվենցիոն և դոտացիոն ծրագրեր: Աղյուսակ 3-ում ներկայացված է պետական բյուջեից

առանձին ծրագրերին հատկացված միջոցների դինամիկան 2010-2021 թվականների ընթացքում:

**Աղյուսակ 3.** *Պետական բյուջեից առանձին ծրագրերին հատկացված միջոցների փոփոխությունը 2010-2021 թթ.*

[15]

	Կապիտալ ծրագրեր	Վարկային ծրագրեր	Դրամաշնորհային ծրագրեր	Ճանապարհների պահպանության ծրագրեր	Սուբվենցիոն ծրագրեր	Դոտացիոն ծրագրեր
2010	62425058.9	86571863.4	33974935.8	5525535.3	6432771.3	32488062.8
2011	74828874.7	71596823.3	31560948.7	5510389.8	6499465.6	32488062.8
2012	44957368.6	112751776.5	8552355.6	5548961.7	6625724.8	32488062.8
2013	44925913.1	160255575.4	14491054.5	5550315	6706011	36244000
2014	44925913.1	160433674.5	14491054.5	5550315	6706011	36244000
2015	41350717.5	63725221.3	17214301.9	5958754	8527878.8	44069164.8
2016	36808613.8	87512131.3	21369771.4	6256692	8555317	47127541.8
2017	37804855.3	57662747.7	24550730.6	7449527	8357445.9	48068316.7
2018	61273994.7	110244396.1	33808827.5	8658003	8865880.7	48232000
2019	89559296.7	128649477	36376306.4	9882903	9033752.8	51071361.3
2020	115280906.1	165261571.1	33821936.3	10377048.2	19096940.5	55378535
2021	133009116.7	82606664.3	27196811.1	10895900.6	17093001.3	64596984

Աղյուսակի տվյալներից երևում է, որ բոլոր ծրագրերը բացի վարկային և դրամաշնորհային ծրագրերից, ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել են: Վարկային և դրամաշնորհային ծրագրերը օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերն են, այսինքն դրանք արտաքին աշխարհից եկող միջոցներ են և դրանց վրա ազդեցություն երկրի կառավարությունը չունի: Սուբվենցիոն և դոտացիոն ծրագրերը պետական բյուջեից համայնքային բյուջեների տրվող միջոցներն են: Այսպիսի ծրագրերի վրա կատարված միջոցները հատկապես կարևոր են տարածքային համաչափ զարգացման և համայնքներում որակյալ հանրային ծառայությունների մատուցելու համար: Սուբվենցիոն ծրագրերը ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել են գրեթե 2.5 անգամ, իսկ դոտացիոն ծրագրերը՝ 2 անգամ: Ճանապարհների պահպանության ծրագրերի վրա ծախսված միջոցները ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել են մոտավորապես 2 անգամ: Այս փաստը տրամաբանական է, քանի որ ամեն տարի կատարվում են ճախսեր նոր ճանապարհների կառուցման և հինների հիմնանորոգման համար, հետևաբար հետզհետե ավելանում է այդ ճանապարհների պահպանության վրա կատարվող ծախսերը: Տնտեսության համար շատ կարևոր է պետության կողմից կատարվող կապիտալ ծախսերը: Կապիտալ ծրագրերը՝ կառուցման, վերակառուցման, վերականգման, նախագծահետազոտական և գեոդեզիաքարտե-

զագրական աշխատանքների վրա կատարվող շախսերն են: Կապիտալ ծրագրերի վրա կատարված ծախսերը 2010-2021 թվականների ընթացքում աճել են գրեթե կրկնակի:

**Եզրակացություն**

• Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային առավել բարենպաստ ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով: ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է տնտեսական ակտիվության բարձրացման, բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ծավալների մեծացման միջոցով տնտեսական կայուն աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը: ՀՀ-ում ներդրումային քաղաքականություն իրականացնող հիմնական մարմինը Էկոնոմիկայի նախարարությունն է: Էկոնոմիկայի նախարարության հիմնական նպատակներն են տնտեսական քաղաքականության մշակումը, իրականացումը, համակարգումը և արդյունքների գնահատումը:

• «Do in Business» զեկույցի տվյալների վերլուծությունից պարզ դարձավ, որ

Հայաստանը լավ դիրքեր է գրանցում բիզնես սկսելու և բիզնեսի գրանցման ցուցանիշներով: Բիզնես սկսելու ցուցանիշով Հայաստանը երկար ժամանակ եղել է ուսումնասիրվող երկրների առաջին տասնյակում: Իսկ բիզնեսի գրանցման ցուցանիշով Հայաստանը լավ դիրքեր է գրավել մինչև 2015 թվականը, դրանից հետո այդ ցուցանիշով վատացել է երկրի դիրքերը: Հայաստանը վերջին տարիներին բարելավել է իր դիրքերը արտահանման հնարավորություն, պայմանագրերի կատարման, էլեկտրականություն ստանալու հնարավորության ցուցանիշներով: Իսկ մյուս ցուցանիշներով երկիրը կամ էական փոփոխություններ չի ունեցել, կամ ավելի է վատացրել իր դիրքերը:

- 2008 և 2013 թվականների BEEPS զեկույցների արդյունքների վերլուծությունը Հայաստանի համար պարզ է դառնում, որ 2013-2008 թվականների ընթացքում ըստ ձեռնարկատերերի միայն հարկային բեռը, ֆինանսական միջոցների հասանելիությունը, հող ձեռք բերելու հնարավորություններն են խնդիրներ ձեռնարկատիրական գործունեության համար: Մնացած բոլոր հիմնախնդիրները բարելավվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում:

- ՀՀ-ում կատարված հիմնական միջոցների համախառն կուտակումը և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունները վերլուծելու արդյունքում պարզ դարձավ, որ մինչև 2008-2009 թվականների տնտեսական ճգնաժամը ներդրումները և ամորտիզացիոն հատկացումները աճել են, ապա նվազման միտում է ունեցել մինչև 2016 թվականը հետո աճել մինչև 2019 թվականը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծությունից պարզ դարձավ, որ ուղղակի ներդրումները աճել են մոտ 16 անգամ, պորտֆելային ներդրումները՝ 10 անգամ, իսկ այլ ներդրումները՝ 13 անգամ: Դրանց մեջ ամենափոքր տեսակարար կշիռը ունի պորտֆելային ներդրումները: Չնայած նրան, որ պորտֆելային ներդրումները էականորեն աճել են, դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ 2000-2019 միջինում տատանվում է 7 տոկոսի սահմաններում: Սա ապացուցում է, որ ֆինանսական շուկան երկրում վատ է զարգացած և վերջին 20 տարվա ընթացքում դրական փոփոխություն չի արժանագրվել: Իսկ ներդրումների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը ունի այլ ներդրումներ բաժինը: Ներդրումների այս բաժնի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն ավանդները և վարկերը: Վարկերը և ավանդները միասին 2019 թվականին կազմել են այլ ներդրումների 85 տոկոսը, իսկ ընդհանուր ներդրումների 68 տոկոսը: Այն իր մեջ լուրջ շիկակայնություն է պարունակում, քանի որ ցանկացած փոփոխություն բանկային համա-

կարգում լուրջ ազդեցություն կունենա ներդրումների մակարդակի վրա:

- Հայաստանում կատարված ՕՈՒՆ-երի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ներդրումների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն հանքագործությանը, ֆինանսական միջնորդության, հեռահաղորդակցության, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտները:

- ՕՈՒՆ-երի աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Հայաստանում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումները ամենաշատը գալիս են Ռուսաստանից: Չնայած նրան, որ դրա տեսակարար կշիռը նվազել է 2010-2018 թվականների ընթացքում՝ 51 տոկոսից դառնալով 38, Ռուսաստանը դեռևս մնում է Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի հիմնական դոնորը: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-եր մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն նաև Ֆրանսիայից, Գերմանիայից և ԱՄՆ-ից կատարվող ներդրումները: Ֆրանսիայից եկող ՕՈՒՆ-երը վերջին տարիներին նվազել են՝ 2010 թվականին 11 տոկոսից դառնալով 2018 թվականին 3 տոկոս: Գերմանիայից և ԱՄՆ-ից եկող ՕՈՒՆ-երի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ վերջին տասնամյակի ընթացքում գրեթե փոփոխության չի ենթարկվել՝ տատանվելով 3-5 տոկոսների շրջանում: Վերջին տարիներին մեծացել է Միացիալ Թագավորությունից և Նիդերլանդներից եկող ՕՈՒՆ-երի տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների մեջ: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն օֆշորային երկրներից եկող ներդրումներ: Այդպիսի երկրներից են Կիպրոսը, Ջերսին, Վիրջինյան կղզիները, Պանաման և Սեյշելները: 2018 թվականին այս երկրներից միասին եկող ներդրումները կազմել են ընդհանուր ՕՈՒՆ-երի 15 տոկոսը: Հայաստանում կատարվող ՕՈՒՆ-երի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն այնպիսի երկրներից եկող ներդրումները, որտեղ մեծ է հայկական սփյուռքը: Այդպիսի երկրներից են Արգենտինան և Լիբանանը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Պուշյան Հ. Բ.**, Մակրոտնտեսական կարգավորում: - Երևան, 2005, 339 էջ:
2. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք, 1994թ. Հուլիսի 4 - <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>
3. «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջպետական երկկողմ համաձայնագրեր - [https://www.mineconomy.am/media/12738/BIT\\_arm\\_01.07.2020.pdf](https://www.mineconomy.am/media/12738/BIT_arm_01.07.2020.pdf)

4. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», ՀՀ կառավարության 442-Ն որոշում, 2014 թ. Մարտի 27 - <https://www.gov.am/files/docs/1322.pdf>
5. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, 2019 թ. Մայիսի 8 - <https://www.arlis.am/documentview.aspx?docid=130615>
6. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կանոնադրություն, ՀՀ կառավարության 658-Լ որոշում, 2019թ. Հունիսի 1 - <https://mineconomy.am/media/7979/658v.voroshum.pdf>
7. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության կանոնադրություն - [https://mineconomy.am/media/7988/09.Gorcarar\\_kanonadrutyun.pdf](https://mineconomy.am/media/7988/09.Gorcarar_kanonadrutyun.pdf)
8. Doing Business, World Bank, 2010-2019 - <https://www.doingbusiness.org/en/reports/global-reports/doing-business-2019>
9. BEEPS, World Bank and European Bank for Reconstruction and Development, 2008-2013 - <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/21799/957010WP00PUBL0BAAG0final0clean0010.pdf?sequence=1&isAllowed=y>
10. FDI Regulatory Restrictiveness Index, OECD, 2018 <https://stats.oecd.org/Index.aspx?datasetcode=FDIINDEX>
11. Ազգային հաշիվների համակարգ, ՀՀՎԿ, 2000-2019 թթ.
12. Միջազգային ներդրումային դիրք, Տարեգիրք, ՀՀՎԿ, 2000-2019 թթ.
13. Արտաքին տնտեսական գործունեություն, Տարեգիրք, ՀՀՎԿ, 2010-2019 թթ.
14. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենք, 2008-2020
15. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենք, 2010-2021

Շժանա/Հանձնակի է 20.10.2021

Рецензирована/Գրախոսակի է 03.11.2021

Принята/Ընդունակի է 10.11.2021